# ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

## ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՄԵՆԱԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՄԿԿ Կենտկոմում և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդում Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի աշխատավորներից բազմաթիվ բողոքներ են ստացվում ազգության պատճառով աշխատանքից ազատելու կապակցությամբ, որը զանգվածային բնույթ է ընդունում։ Կան հավաստի տվյալներ, որ տնտեսական և կուսակցական ղեկավարները ոչ միայն հակահարված չեն հասցնում այդ հանցավոր կամայականությանը, ճնշմանն ու սպառնալիքներին միանգամայն անմեղ մարդկանց նկատմամբ, այլ հաճախ էլ ուղղակի հովանավորում են ապօրինի գործողությունները և նույնիսկ անմիջականորեն մասնակցում դրանց։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում են.

Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմներից, Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդներից, մինիստրություններից և գերատեսչություններից պահանջել վճռականորեն կասեցնել քաղաքացիների սահմանադրական իրավունքների ամենակոպիտ խախտումները, բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել այսուհետև կանխելու դրանց կրկնվելը։ Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև կուսակցական ու սովետական մարմինների այն ղեկավարներին, որոնք թույլ են տալիս աշխատանքից քաղաքացիների ապօրինի ազատում ազգության պատճառով, անձնական պատասխանատվության ենթարկել ընդհուպ մինչև կուսակցությունից հեռացնելը, զբաղեցրած պաշտոններից հանելը, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ քրեական պատասխանատվության ենթարկելը։

Նման կարգի ազգայնական և հակաօրինական բնույթի երևույթներն արմատախիլ անելու աշխատանքն անցկացնել լայն հրապարակայնության մթնոլորտում։ Մեղավոր անձանց նկատմամբ ձեռնարկված միջոցների մասին տեղեկացնել աշխատավորական կոլեկտիվներին, ինչպես նաև իրազեկ պահել հասարակայնությանը մամուլի միջոցով և մասսայական ինֆորմացիայի այլ միջոցներով։

Սույն որոշման կատարման մասին զեկուցել ՍՄԿԿ Կենտկոմին և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին։

| | |
|---|---|
| ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քարտուղար | ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ |
| Մ. ԳՈՐԲԱՉՈՎ | Ն. ՌԻԺԿՈՎ |

# ПОСТАНОВЛЕНИЕ
# ЦК КПСС и Совета Министров СССР

**от 5 декабря 1988 года**

## О грубейших нарушениях конституционных прав граждан в Азербайджанской ССР и Армянской ССР

В ЦК КПСС и Совет Министров СССР поступают многочисленные жалобы от трудящихся Азербайджанской ССР и Армянской ССР в связи с принимающими массовый характер увольнениями с работы по национальному признаку. Имеются достоверные данные о том, что хозяйственные и партийные руководители не только не дают отпора этому преступному своеволию, давлению и угрозам в отношении ни в чем не повинных людей, а зачастую прямо потворствуют незаконным действиям и даже принимают в них непосредственное участие.

Центральный Комитет КПСС и Совет Министров СССР постановляют:

Потребовать от ЦК Компартий Азербайджана и Армении, Советов Министров Азербайджанской ССР и Армянской ССР, министерств и ведомств решительно пресечь грубейшие нарушения конституционных прав граждан, принять все необходимые меры по предотвращению их повторения впредь. Руководителей предприятий, учреждений и организаций, а также партийных и советских органов, допускающих незаконные увольнения с работы граждан по национальному признаку, привлекать к персональной ответственности вплоть до исключения из партии, снятия с занимаемых постов, а в случаях, предусмотренных законом, привлечения к уголовной ответственности.

Работу по искоренению подобного рода проявлений националистического и противозаконного характера проводить в обстановке широкой гласности. О мерах, принятых в отношении виновных лиц, информировать трудовые коллективы, а также доводить до сведения общественности через печать и другие средства массовой информации.

О выполнении настоящего постановления доложить ЦК КПСС и Совету Министров СССР.

**Секретарь Центрального Комитета КПСС**
**М. ГОРБАЧЕВ**

**Председатель Совета Министров СССР**
**Н. РЫЖКОВ**